

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 30/2

ք.Երևան

1 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 20.12.2017թ. N361666/01 որոշման դեմ «ԷՄՔԱՐ» ՍՊԸ տնօրենի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ԷՄՔԱՐ» ՍՊԸ տնօրենի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 20.12.2017թ. N361666/01 որոշման դեմ, որով կիրառվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը նույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 20.12.2017թ. N361666/01 որոշումը կողմը ստացել է 09.03.2018թ., սակայն դրա դեմ բողոքը տրվել է 04.05.2018թ.՝ վերոգրյալ իրավանորմով նախատեսված երեսուն օրյա ժամկետի խախտմամբ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Իր հերթին, ՀՀ հարկային օրենսգրքի 440-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի պաշտոնատար անձանց այն գործողությունների բողոքարկումը, որոնք կապված են վարչական պատասխանատվության կիրառման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Քննարկվող դեպքում «ԷՄՔԱՐ» ՍՊԸ տնօրենի կողմից բաց է թողնվել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 20.12.2017թ. N361666/01 որոշումը վարչական կարգով բողոքարկելու ժամկետը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԷՄՔԱՐ» ՍՊԸ տնօրենի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Գ.ԱՆԱՆՅԱՆ